

մինչև 1871 չէին ֆանչցած «իրենց եղած այս ճրի չնորհը»: Անձանթ էին արդեօք դոյութեանը իրենց համար հիմնուած այդ բարենպաստակ ընկերութեան: Ո՞վ էին այն անձերը, որոնք Տիվրիկի համար այդպիսի ընկերութիւն մը կազմած էին: Հայրենիք հող բացատրութիւն չի տար, բայց տարիներ վերջ Տօքթ. Կ. Յ. Փաշայեան ղէպի Տիվրիկը բաժնորդութեան մը առթիւ կը գրէ՝ «Գափամանեան ընկերութիւն, որ Տիվրիկ-ցոց նախաւարց շնորհիւ կազմուած է ի Պոլիս եւ ունի բազում անշարժ կալուածներ... Սոյն ընկերութիւնը կտակի ձեւի տակ կազմուած է եւ ունի «Միւթէվէլլութիւն»։ Պատրիարքարանը առանց ի նկատի առնելու սոյն կէտեր, սկսաւ ընդհանուր ազգ. կալուած նկատել եւ իւր իրաւասութեան ներքեւ առնուլ... սորա համար արդէն Տիվրիկ-ցիք բողոքած են» (Հայրենիք, 1888 թիւ 3306)։

Պոլսոյ Մանգումէ կը գրէ 1901ին. «Տիվրիկի կալուածոց Հոգաբարձութիւնը իր անդամներէն ոմանց մահուամբը եւ ոմանց ալ ճամբորդելովը գրեթէ կազմալուծեալ վիճակ մը առած ըլլալուն, Գաղաքական Ժողովը իր վերջին նիստին մէջ որոշած է վերակազմել նոյն Հոգաբարձութիւնը, պակասած ութը անդամներուն տեղ նորերը ընտրել տալով։ Ըստ ներքին Կանոնադրութեան Տիվրիկի Կրթամուէր ընկերութեան, այդ ընտրելիք են միայն Պոլիս գտնուող Տիվրիկցիները։ Այս առթիւ կարեւոր է յիշել թէ Տիվրիկի կալուածոց Հոգաբարձութիւնը, որ բաւական կալուածներ ու վազրժներ ունի, գրեթէ երկու հարիւր տարուան հաստատութիւն մ'է Պոլիս գտնուող Հայ բնակչիւնէրու նախաձեռնութեամբ սկսած, Տիվրիկցի Գափամանի Հայ արհեստաւորներու կողմանէ շարունակուած եւ Տիվրիկցի Գերդանին ֆաշայեութեամբը յառաջացած, որ նոյնպէս գաղթած է Տիվրիկէ...» (Մանգ. Էփեփար, 1901 թ. 55)։

1901ին վերոյիշեալ Հոգաբարձութեան Ատենայեան էր Միիքան Սէրեան (Անդ)։

1905ին Կ. Գ. Սուփասեան Տիվրիկէն բրած թղթակցութեան մը մէջ ըսելէ յետոյ թէ «Գափամանեան ընկերութիւնը» «չուրջ

150 տարի առաջ» կազմուած է՝ կը գրէ. «Մեր նախնիք... 150 տարի առաջ սովի պատճառաւ ի Կ. Պոլիս գաղթած եւ շարքաւան մէյմէկ փարա վնարելով այս կալուածները գնած են, բոլորն ալ պարզ արհեստաւորներ են (Գափամանի մեծաւ մասամբ) որ կոչուած է Գափամանեան ընկերութիւն» (Բիւզանդիոն, 1905 թ. 2699)։

«Գափամանեան ընկերութիւնը» 1871ին Տիվրիկի դպրոցին ուսուցիչներու ամսականը վնարել, աղբիւրի մը շինութիւնը հոգացել եւ կամուրջին նորոգութիւնը գլուխ հանել էր, որուն վրայ Հայրենիք (1871 թիւ 53) կ'աւելցնէր. «Այսպիսի հաստատ, արդիւնաշատ բաղձաժամանակեայ ընկերութեան մեծ. պաշտպանաց հրապարակաւ շնորհակալութիւն կը յայտնեմք, որ իւր ստակով։ 180 տարիէ հետէ անընդհատ որդւոց յորդել կը շարունակէ...»։

Յիշենք վերջին տեղեկատու մ'ալ — Ե. Ռշտունի Տիվրիկէն կը գրէ. «Տիվրիկցի Գափամանեաններու Բարեսիրական ընկերութիւնը կազմուած է Հայոց ՌՄԳ եւ Տաճկաց 1168 թուին, այսինքն՝ 157 (154) տարիէ ի վեր, իրողութիւն մը, զոր կրնանք հաստատել Տիվրիկի կալուածոց Պոլսոյ Հոգաբարձութեան գրասենեակը գտնուած յիշեալ Գափամանեաններու արձանագրութենէն, որուն պատճէնն ալ կը մնայ Տիվրիկի Առաջնորդարանին մէջ» (Ազատամարտ, 1910 թ. 185)։

Ընկերութեան արձանագրութիւնները գրաբար են եւ ունեցած կալուածները կը յատկացնէ Տիվրիկ քաղաքի եկեղեցիներուն, վարժարանին, աղբիւրներուն ու կամուրջին (Անդ)։

2. ԱՆՁՆՈՒԹԻՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1868)

1868 Յունիսին Տիվրիկէն կ'իմացնեն թէ Անձնուէր ընկերութեան ճիւղ մը հաստատել են (Փոնջ Օրագիր, Կ. Պ. 1868 թիւ 184)։ Ձեռք կարծեր թէ 1868էն աւելի հին ըլլայ։ Ընկերութիւնն կը յիշէ նաեւ Մասիս Օրագրէրը (1869 թ. 300) 1868 Նոյ. 14ի թղթակցութեամբ։ — Հիմնադիրն է Աստուածատուր Մ. Ֆէլէկեան, որ 1870ին Ընկերութեան Ատենայեանն է։ Ընկերութիւնը կրցած է ունենալ 130 բաժանորդ եւ կիրակնօրեայ դպրոց մը մեծերու համար։ Ունեցած է թշնամիներ, որոնք խափանել ճգնած ու

յաջողած են, սակայն Ֆէլէկեան չէ յուսահատած, 1870ին վերակազմած է Ընկերութիւնը, որ ունի գրքեր ամէնուն ընթերցման համար (Մանգ. Էփեփար, 1870 թ. 1428)։

1872 Մարտ 15 թուակիր թղթակցութեան մը մէջ 51 ստորագրողներ Տիվրիկէն կը բողոքեն տեղւոյն Տէր Գրիգորի դէմ, որ «չըկերաւ չըխմեց՝ մինչեւ տեղիս Անձնուէր ընկերութեան ճիւղը կործանեց» (Փոզ, Կ. Պ. 1872 թ. 59)։

3. ԱՂՔԱՍԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1870)

Հիմնած է Աստուածատուր Մ. Ֆէլէկեան 1870ին մասնաւոր գանձանակ մը հաստատելով աղքատներու համար (Մանգ. Էփեփար, 1870 թ. 1428)։ — 1872ին կը պահէ Տէր Գրիգորի եր գոյութիւնը՝ հակառակ Տէր Գրիգորի ջանքերուն զայն կործանելու (Փոզ, 1872 թիւ 59)։

1878ին Տիվրիկի մէջ կը գտնէր Գարե-դին Վ. Սրուանձտեանց «Ազատախոս» (Թորոս կերութիւն» մը «հմուց կազմեալ» (Թորոս Աղբար, Ա., էջ 210)։ Ուրեմն՝ անուն փոխած էր Ընկերութիւնը։

4. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (...1878)

Կը յիշուի 1878ին Լոյսէն Վ. Սրուանձտեանց (Թորոս Աղբար, Ա., էջ 210) նոյն տեանց «Թորոս Աղբար, Ա., էջ 210) նոյն տարի զայն կը գտնէ «անդործ»։ Կրնայ թէ մը հին ըլլալ։

5. ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (...1880)

Ընկերութեան Ատենայեանը՝ Մ. Հայրապետ Սուփասեան եւ Ատենայեան մը ընկերութիւն թ. վէլէտեան թղթակցութեան մէջ, 1880 Դեկտ. 1/13ին, կը գրեն Ընկերութեան անունը սա՛ ձեւով. «Երիտ. Ընկերութիւն Տիվրիկոյ» (Մասիս, 1881 թ. 2793)։ Տարի մը վերջ Ընկերութեան վարչները — Տարի մը վերջ Ընկերութեան անունը տեղափոխելու համար — թղթակցութեան մը մէջ Ընկերութեան Տիվրիկոյ» գրած են՝ «Երեց. Ընկերութիւն Տիվրիկոյ» (Մասիս 1882 թ. 3053)։ — Անհնարին եղաւ ճշդել։

6. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1912)

Հիմնուած է 1912ի սկիզբները, նպատակ ունենալով «վարժարանին սատարել»։ Ունի Կանոնադիր եւ բաւական անդամ (Բիւզանդիոն, 1913 թ. 5007)։

1914ին թատերական ներկայացումներ կու տայ (Հոգար, Սերաստիա 1914 թ. 8)։

7. ՏԻՎՐԻԿԻ ՇՐՋԱԿԱՅ ԳԻՒՂԵՐՈՒ ՏԱՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՕԺԱՆԳԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1918)

Կազմուած է 1918 Դեկտեմբերին Պոլսոյ մէջ։ 1919 Յունուարին ունին հետեւեալ առժամեայ վարչութիւնը.

Մ. Գալբէճեան	Ատենայեան
Հ. Զարգարեան	Ատենայեան
Ս. Երեմիկեան	Գանձապահ
Գ. Սիրաք	
Մ. Սարգսի	
Մ. Թէլլեան	
Մ. Պետրիկեան	
Գ. Մակարեան	Անդամներ
Յ. Բալազեան	
Մ. Տօքեան	
Թ. Խաչարեան	
Ս. Պալեան	

Միութիւնը ունի 200 անդամ եւ ամսական 60—70 ոսկի՝ անդամավճարներէ (Փամանակ, 1919, թ. 3417)։

1919ին գումարուած Ընդհ. Ժողովը կ'ընտրէ հետեւեալ նոր վարչութիւնը.

Հմայեակ Զարգարեան	Ատենայեան
Մարտիրոս Սարգսի	Ատենայեան
Մանուկ Պոյաճեան	Գանձապահ
Հայկ Մանէնտեան	
Միհրան Բոլիկեան	
Ղազար Մէլէկեան	Խորհրդականներ
Սիրաք Գոգանեան	

(Տեղեկագիր Հայրեն. Միութեանց, Կ. Պոլիս 1921, էջ 3, 15)։

ԳԻՐԱՍՈՆ (ԿԻՐՈՍԻՆ) ԳԻՒՂ

1. ՎԱՐԱՋԳԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1874—1875)

Նպատակն է «ձրի դաստիարակութիւնը բնդիւնարացնել»։ 1875 Փետրուարին կը բա-

1867ի վերջը կը վերակազմուի Սեբաստիոնի նիւթը: Վերջիշեալ նամակագիրը կը տողէ. «Դեկտեմբեր 21ին Սեբաստիոն բոլոր իշխանները, արուեստաւորաց գլխաւորները, քահանայք եւ ուսումնական անձինք ընդ. ժողով գումարեցին ընդ նախադառնութեամբ Մեսիայեան Յովհաննէս վարդապետի: Այս ժողովը 12 անդամէ բաղկացեալ Քաղաքական ժողով մը ընտրեց, որ անխտիր հին ու նոր դադարի տէր անձերէ կը բաղկանայ: Քաղաքական ժողովը Դեկտ. 22ին առաջին նիստն ըրաւ եւ իր Դիւանը կազմեց Մեծ. Միապետան Սարգիս Զ. Ստեփանեան եւ Մեծ. Պալեոգեան Պետրոս Զ. Ստեփանեան կարգեց: Նոյնպէս վեց քահանայի կրօնական ժողով մ'ալ կազմուեցաւ Դեկտ. 25ին: Ուսումնական խորհուրդը եւ Սեմեֆրիմեան ընկերութիւնը պաշտօնական կերպիւ հաստատուեցան... Սենեքերիմեան Ընկերութիւնը նորոգ կազմուեցաւ 18 անձէ, որոնք արդէն Սենեքերիմեանի արդեամբքը շինուած խանին արդիւնքը, որ վարժարանաց յատկացած է, հաւաքելէ զատ, նաեւ ուրիշ արդիւնքներ ալ ի նպաստ վարժարանաց հոգալու միջոցներ ձեռք պիտի առնեն... վարժարանաց ուսումնական եւ բարոյական տեսչութիւնը Ուսումնական խորհուրդին պաշտօնն է, իսկ դրամական պիտոյքը հոգալը՝ Սենեքերիմեան Ընկերութեան» (Ժամանակ, 1868, էջ 11—12):

Պոլսոյ Փոռնիկին կը գրեն Սեբաստիայէն 1868ի դարեան. «Քաղաքիս Սենեքերիմեան նորակազմ Ընկերութիւնը Մայր դպրացն աւելի ընդարձակելու ու նորոգելու ձեռնարկութիւն ըրած ու ստորագրութիւն բացած է: Արդէն բաւական ստակ հաւաքեցին» (Փոռնիկ, 1868, Թ. 166):

Ինչպէս շեշտած էինք վերը՝ Սենեքերիմեան Ընկերութեան երկու ճիւղերէն ալ հին ու սկզբնական կանոնագիր անձամբք է մեղ: Անշուշտ ունեցած ըլլալու են, կ'ըսէինք: 1867ի վերջը երբ Սեբաստիոն ճիւղը կը վերկազմուի՝ կը յորինուի նաեւ նոր կանոնագիր մը, որմէ կը հասկցուի թէ եիմ մը կար, ուրեմն: Սեբաստիայէն 1868 Յունիսին գրուած նամակ մը կը տեղեկագրէ. «Սենեքերիմեան Ընկերութիւնը նոր կանոնագրութիւն մը հաստատելով՝ բոլոր անդամոց ստորագրութեամբ վաւերացաւ:

Ղաապապաշեան Մ. Գրիգոր աղան իրենց օգնական առին, որ Ագտերեան Մ. Սեբովրէտայի հետ ամենայն ջանիւք հող կը տանի զպրոցին նորոգման Ընկերութեան կողմանէ» (Փոռնիկ Կ. Պ. 1868 Թ. 177):

Դժբախտաբար ոչ մէկ տեղ հրատարակուած թէ այս կանոնագրութիւնը, որ մեծապէս կը շահագործուէր մեղ: Չենք գիտէր թէ արդեօք 1875ի կանոնագիրը նո՞յն է ստոր հետ:

«Սենեքերիմեան Ընկերութեան» Պոլսոյ նիւթը դադրած էր գործելէ 1863ին, ինչպէս տեսանք: Չայն վերակազմելու փափաք կ'ունենան սակայն Պոլսաբնակ Սեբաստացիներ 1870ին: Առիթի մը միայն կը սպանէին: 1871ին Պոլիս կը գտնուի Սեբաստիոն Սուլթան. փոխանորդ Պետրոս Ծ. վ., որ կը քաջալերէ ու կը խրախուսէ բոլոր Սեբաստացիները՝ վերականգնելու իրենց նախնեաց պատուաւոր Ընկերութիւնը: Արդիւնքը այն կ'ըլլայ որ 1871ի ամբարն Յայտարարութիւն մը կը հանեն թէ Ընդհ. Ժողով տեղի պիտի ունենայ: Ժողովը կը գումարուի նախ Սեպտեմբեր 10ին, յետոյ 26ին նախադասութեամբ Տէր Պետրոս վարդապետի եւ արդիւնքը կ'ըլլայ հետեւեալը.

Նոր Ընկերութիւն մը կը հիմնեն, առանց մասնաւոր անունի եւ զայն կը համարեն շարունակութիւնը Սենեքերիմեան Ընկերութեան: Հետեւաբար կը կոչեն զայն «Սեմեֆրիմեան Ընկերութիւն»: Ահա անոնց որոշումները.

«1. Միաձայն հաւանութեամբ որոշուեցաւ որ սոյն Ընկերութիւնը Սեմեֆրիմեան Ընկերութեան շարունակութիւնն ըլլայ եւ նորա բոլոր գործերը սոյն նորակազմ Ընկերութեան յանձնուի, որպէս զի ըստ արժանոյքը մատակարարուի եւ քիչ ժամանակի մը մէջ գիշերօթիկ վարժարան մը հիմնուի: Սոյն Ընկերութիւնը անուանուեցաւ Սեմեֆրիմեան վերակազմ Ընկերութիւն Սեբաստիոն:

«2. Բուհարկութեամբ առժամեայ Յանձնաժողով մը կազմուեցաւ, որոյ պաշտօնն է Ընկերութեան Հիմնական կանոնները խմբագրել եւ Ընդհ. Ժողովոյն ներկայացնելով պաշտօնէ դադարել: Առժամանակեայ Յանձնաժողովն հետեւեալ Մեծ. անձերէ կը բաղկանայ. Գրիգոր Թաշեան, Յակոբ

Ահարոնեան, Մ. Յակոբ Գապրգեան, Մ. Պետրոս Մուրատեան, Մ. Սեբովրէտ Օտապաշեան, Կիրակոս Նորիատեան, Օհան Տէր Օհանեան, Օհաննէս Ալթունեան, Մկրտիչ Գարաթէֆէյեան, Գրիգոր Օտապաշեան, Յակոբ Պոյաճեան, Խաչիկ Բոտեան...:

2. Հոկտ. 1871 ի Գալաթիա

Ընդհ. Ժողովոյ Ատենապետ Ստեփանեան Յ. Պ. Թաշեան Սիմէոն Գ. Հէքիմեան (Հայրենիք, Կ. Պ. 1871 Թ. 69):

Յաջորդ շարաթ Ընդհ. Ժողով տեղի կ'ունենայ պատրաստուած կանոնագրութիւնը վաւերացնելու համար (Հայրենիք, 1871 Թ. 70):

(Շարունակելի) Զ. ԵՓՐԵՄ ՊՈԼՍԵԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Հ. Ա., Հայաստան IX—XI դարերում: Երեւան 1959, 80, էջ 255:

Յարութիւնեան այս հատորով կը ներկայացնէ Հայաստանը Թ-ԺԱ դարերու մէջ կամ Բաղրատունեանց Հարստութեան շրջանին: Վասն զի ինչպէս ինքը հեղինակը իր «Երկու Պօսք»ին մէջ կ'արտայայտուի «Հայ ժողովրդի 9—11 դարերի պատմութիւնը, որի ուսումնասիրմանն է նուիրուած սոյն աշխատութիւնը, կազմում է ամփոփ, ինքնուրոյն մի շրջան, որը մեծ դեր է խաղացել հայ ժողովրդի միջին դարերի պատմութեան մէջ: Հետեւաբար միջին դարերի այս շրջանի պատմութեան ուսումնասիրութեան»:

Այդ դարերու ազգային պատմութեամբ դրացած են իրենց հանրաձայնութեամբ Պատմութիւններով Զ. Չամչեան եւ Լէօ, «Սակայն թէ Չամչեանի եւ թէ Լէօյի աշխատութիւնները, կը շարունակէ Յարութիւնեան (անդ էջ 7), խիստ թերի են, նրանք միայն շօշափում են քաղաքական եւ կրօնական անցքերը, աչքաթող անելով երկրի տնտեսական կեանքը, դասակարգային յա-

րաբերութիւնները եւ նոյն իսկ կուլտուրայի որոշ ճիւղեր: Ուստի մեր սոյն մենագրութիւնով ցանկանում ենք մասամբ լրացնել այդ բացը, որը մի փոքր է, աւելի ամփոփ կերպով տալու հայ ժողովուրդի 9—11-րդ դարի պատմութիւնը իր բոլոր կողմերով: Չամչեան ու Լէօ աչքաթող պիտի չընէին այդ հարցերը, եթէ անոնք ալ ոչ թէ Հայոց Ընդհ. Պատմութիւն գրէին, այլ մենագրութիւններ:

Յարութիւնեանի «Փորձ»ը յաջողութեամբ պսակուած է: Եթէ բաւական ծաւալուն գլուխներու մէջ կը պատկերացնէ Հայաստանը: Գլ. Ա. Հայկական պետութեան վերականգնումը, որ տեղի կ'ունենայ արաբական պետութեան տկարացումով, բիւզանդական կայսրներու բարեկամական իշխաններու, մանաւանդ Բաղրատունիներու քաղաքացիութեամբ: Գլ. Բ. Պաշար հայկական պետութեան ամբարշտման համար, որ կը յաջողի Աշոտ Ա. ի խոհմ գործունէութեամբ, Սմբատ Ա. ի Ատրպատականի էմիրութեան հարկատուութեան խուսափումով եւ արաբական ասպատակութիւնները ետ մղելով: Գլ. Գ. Հայկական պետութեան ամբարշտման եւ վարդապետ շրջանը, որ կը բուրդուի մասնաւորապէս Գագիկ Ա. ի կենդրոնացումի հետապնդումով:

Յաջորդ գլուխներն են. «Դ. Հայաստանի սոցիալ-տնտեսական յարաբերութիւնները եւ հասարակական — քաղաքական կարգերը 9—11-րդ դարերում. Ե. Գիւղացիական շարժումներն ու ապստամբութիւնները Հայաստանում 9—11-րդ դարերում. Զ. Հայկական պետութեան թուլացումը եւ անկումը. Է. Հայկական կուլտուրան 9—11-րդ դարերում»:

Հայկական կուլտուրան 8—11-րդ դարերում: Նուիրելի եւ արուեստ:

Յարութիւնեան աչքի առջեւ ունեցած է հայ հին պատմագիրներն եւ մատենագիրները, դարձեալ նորագոյն ուսումնասիրութիւններէն մաս մը եւ առաջադիր նպատակը հետապնդած: Հասած է անոր: Սահուն եւ հաճելի ոճով ներկայացուած է ամէն հարց: Սակայն բաղձալի էր որ եկեղեցականներու եւ իշխաններու գործունէութեանը եւ ժողովուրդին հանդէպ վարմունքին՝ աւելի անաչառութեամբ մերձենար:

Հ. Հ. Ո.